ԻՍՐԱՅԵԼԻ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1948-1990 ԹԹ.

Ավանդաբար, Իսրայելում խորը ուսումնասիրություններ են կատարվել Մեծ Մերձավոր Արևելքի էթնո-մշակութային և քաղաքական խնդիրների ոլորտում: Հրեական պետության արտաքին քաղաքականությունն այդ ուղղությամբ իրականացվել է երկու հիմնական ճանապարհով՝ բացահայտ և գաղտնի դիվանագիտության մեթոդներով: Բացահայտ դիվանագիտությունն իրականացրել են պետական քաղաքական գործիչները, ի տարբերություն գաղտնի դիվանագիտության, որն իրականացվել է հրեական հատուկ ծառայությունների գործունեության շրջանակներում:

Իսրայելի հատուկ ծառայությունների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի «Մոսսադը» («Մոսսադ Լե Մոդիին վե լե տաֆկիդիմ մե յուհադիմ», որ նշանակում է՝ հետախուզության և հատուկ առաջադրանքների ինստիտուտ): Այն ստեղծվել է 1948թ. հունիսի 30-ին: 1951թ. սեպտեմբերի 1-ից «Մոսսադը» հանդես եկավ՝ որպես անկախ գործակալություն՝ անմիջականորեն ենթարկվելով վարչապետին[1]:

Գաղտնի դիվանագիտությունը սիոնիստական ղեկավարության համար հանդիսացել է մի ցատկահարթակ, որը կոչված է եղել ապահովելու բացահայտ դիվանագիտության հաջող գործունեությունը:

Սիոնիստական շարժման գլխավոր հակառակորդների՝ արաբների դեմ պայքարը դրդում էր Իսրայելին համախոհներ փնտրել տարբեր էթնո-մշակութային տարրերի, ազգային խմբավորումների և կազմակերպությունների շարքերում, որոնք կհակադրվեին արաբական ազգայնականությանը՝ դառնալով հրեաների բնական դաշնակիցը: Ասվածի համատեքստում հրեա ժողովուրդն արտահայտեց իր համակրանքը բոլոր այն ազգային փոքրամասնությունների կամ խմբավորումների հանդեպ, որոնք ճնշվում էին արաբ մուսուլմանների կողմից: Ենթադրվում է, որ հիշյալ ռազմավարությունը մշակվել է Իսրայելի առաջին վարչապետ Դավիթ Բեն Գուրիոնի կողմից դեռևս 1930-ական թթ. վերջերին՝ նախքան պետականության ձեռքբերումը: Ավելի ուշ այն ստացավ «Ծայրամասային ռազմավարություն» (Peripheral Strategy) անվանումը[2], որտեղ իրենց ուրույն շեշտադրումն ստացան քրդական էթնիկ խմբավորումները:

Իսրայելի ռազմավարական համագործակցությունը Թուրքիայի և շահական Իրանի հետ, «քրդական տարածքների» պատմա-աշխարհագրական

---

[1] Капитонов К.А., Израиль. История Моссада и спецназа, Москва, 2005, стр. 9-10

[2] Mamikonyan S., Israel and the Kurds (1949-1990), Iran and the Caucasus, Vol. 9.2, Yerevan, Brill Leiden 2005

սահմանների անորոշության և քրդական հիմնահարցի առկայության պայմաններում մի կողմից սահմանափակվեցին հրեական պետության հնարավորությունները քրդերի հետ բացահայտ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու տեսանկյունից, մյուս կողմից հող նախապատրաստվեց այդ հարաբերությունների զարգացման գաղտնի դիվանագիտության համար: Փաստորեն, քրդական գործոնը դարձավ Իսրայելի արտաքին բացահայտ և գաղտնի դիվանագիտության կողմնորոշիչների միջև հակասական հանգույց, ինչը համեմատաբար առավել հիվանդագին ընդունեց Իսրայելի տարածաշրջանային գործընկեր Թուրքիան:

«Ծայրամասային ռազմավարության» շրջանակներում Իսրայելն աջակցում էր նաև լիբանանյան մարոնիտներին և հարավային Սուդանի ապստամբներին, սակայն առավել օրինակելի էին քրդերի հետ համագործակցության փորձերը: 1950-1951թթ. Իսրայելն առաջին անգամ քրդերի հետ կապերն օգտագործեց իրաքյան քուրդ հրեաների վերաբնակեցումն Իսրայելում կազմակերպելու հաջող փորձերում: Սիոնիստական գործիչների գնահատմամբ, «1948-1952թթ. իրաքյան հրեաների վերաբնակեցումը պետք է համարել ոչ միայն փառավոր էջ սիոնիզմի պատմության մեջ, այլև սիոնիստական գաղափարախոսության հզորության դրսևորում»[3]: Այդ տարիներին Իրաքից Իսրայել տեղափոխվեց շուրջ 113հազ. քուրդ հրեա[4]:

1960-ական թթ. քուրդ-հրեական հարաբերություններում նոր էջ բացվեց: Այս շրջանում հյուսիսային Իրաքի քրդերը զինված պայքար ծավալեցին Բաղդադի բասիստական վարչակարգի դաժան և կեղեքիչ քաղաքականության դեմ: Ապստամբության ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց քրդական հռչակավոր Բարզանի ցեղի առաջնորդ Մուստաֆա Բարզանին: Այդ ընդվզումը, որոշ տատանումներով, շարունակվեց մինչև 1975թ.՝ գրավելով արտաքին ուժերի ուշադրությունը: Այդ տարիներին ակտիվացավ նաև Իսրայելի հետախուզական ծառայությունների գործունեությունը:

1964թ. Իսրայելի Պաշտպանության փոխնախարար Շիմոն Պերեսը գաղտնի հանդիպում ունեցավ քրդական շարժման առաջնորդներից Քումրան Ալի Բեդիրխանի հետ, որը երկար տարիներ եղել էր քրդերի ներկայացուցիչը Եվրոպայում: Բացի այդ, Բեդիրխանը 1940-1950-ական թթ. հետախուզական աշխատանքներ էր կատարել Իսրայելի համար, ուստի ամենահարմար անձն էր համարվում, որը կարող էր վերսկսել իսրայելա-քրդական երկխոսությունը: 1948թ. Բեդիրխանն այն համոզմունքն արտահայտեց, որ Իսրայելի թշնամիներին կարելի է թուլացնել Մերձավոր Արևելքի ազգային փոքրամասնու-

---

[3] Shohet M., The Escape from Iraq: a Personal Account, www.thesite2000.virtualave.net/iraqijews/escape.htm/

[4] Sachar H. M., A History of Israel: from the Rise of Zionism to our Time, New York, 2000, p. 398-399

թյուններին աջակցելու ճանապարհով, որի համար ամենահարմար փոքրամասնությունը քրդերն են: Իսրայելա-քրդական բանակցությունների արդյունքում որոշում կայացվեց իսրայելցի մասնագետների կողմից պարտիզան քուրդ սպաների ռազմական ուսուցում ստանալու վերաբերյալ: Այդ գաղտնի գործողությունն անվանակոչվեց «Մերվեդ», որն սկսվեց 1965թ.՝ տևելով երեք ամիս: Իսրայելը քրդերի ռազմական խորհրդատվության և մարզումներ իրականացնելու նպատակով Իրաք գործուղեց գեներալ Ջուրի Սագույին, փոխգնդապետ Հայիմ Լևակովին, գնդապետ Արիկ Ռեգևին[5]:

1965թ. «Մոսսադի» բարձրաստիճան պաշտոնյա Դավիթ Քիմչենը, իր մի խումբ աշխատակիցների հետ, Իրանի տարածքով գաղտնի ներթափանցեց Իրաք և հանդիպեց քուրդ ապստամբներին: Իսկ հաջորդ տարի իսրայելական կառավարության անդամ Արյեհ Էլիավը, որն Ալիյա Բեթի նախկին լավագույն գործակալներից էր, այցելեց քուրդ ապստամբների շտաբ: Վերջինս, հաղթահարելով լեռնային դժվարանցանելի շրջանները, Իրաքյան Քրդստան բերեց շարժական դաշտային հիվանդանոց, ինչպես նաև երեք բժշկից և երեք բուժքույրից բաղկացած անձնակազմ, որը պետք է բժշկեր վիրավոր քուրդ ապստամբներին[6]: Ինչպես նշում է հրեա լրագրող Շլոմո Նակդիմոնն իր «Անհույս հույս. իսրայելա-քրդական դաշինքի վերելքն ու անկումը» (Hopeless Hope: the Rise and Fall of the Israeli-Kurdish Alliance) աշխատության մեջ, «այդ մեծ շարժական դաշտային հիվանդանոցը հարյուրավոր քրդերի կյանք է փրկել»[7]: Էլիավը հանդիպում ունեցավ քրդերի առաջնորդ մոլլա Մուստաֆա Բարզանիի հետ և շքանշանով պարգևատրեց նրան: Հյուսիսային Իրաքի լեռներում կայացած այդ հանդիպումների ընթացքում քննարկվեց նաև քուրդ ապստամբներին ռազմական, տնտեսական և տեխնիկական օգնություն ցուցաբերելու խնդիրը:

Իսրայելցի մասնագետների աջակցությամբ քուրդ ապստամբները 1966թ. հունիսին լայնածավալ գրոհներ սկսեցին իրաքյան բանակի դեմ: Դե ֆակտո քրդական զորքերի հրամանատարությունն ստանձնել էր Ջուրի Սագույը, որին հաջողվեց լուրջ հարվածներ հասցնել իրաքյան բանակին: Սագույը քրդերին սովորեցնում էր օգտվել իսրայելական հրացաններից, ականներից, ականանետերից, հակատանկային հրթիռային համակարգից, նախագծում էր ռազմական գործողությունները:

Ապստամբության ընթացքում Իսրայելը նաև դրամական օգնություն է ցուցաբերել Մ. Բարզանիի պարտիզաններին: Ամերիկացի լրագրող Ջ. Անդերսոնը «Վաշինգտոն փոստում» գրել է. «Ամեն ամիս իսրայելցի անհայտ մի

---

[5] Yahya H. (Adnan Oktar), Israil'in Kurd Karti: Israil'in Ortadogu Stratejise ve Kurt Devleti Senaryolari, Ankara, 1993, n.p., www.harunyahya.com

[6] Чернер Ю., Куни И., Моссад: первые полвека, Москва, 2003, стр. 80

[7] Payman Arabshahi, Where has Israel NOT Put its Nose into?, The Jordan Times, 30.11.1996

գործակալ, Իրանի սահմանից գաղտնաբար անցնելով Իրաք, քրդերի առաջնորդ մոլլա Բարզանիին 50հազ. ամերիկյան դոլար էր փոխանցում»: Ջ. Անդերսոնի մեկ այլ հրապարակում վերաբերում էր Կենտրոնական հետախուզական վարչության (CIA) զեկույցներից մեկին, որով հաստատվում էին Մ. Բարզանիի և «Մոսսադի» նախկին ղեկավար Զվի Զամիրի միջև առկա ջերմ հարաբերությունները: Զեկույցի համաձայն՝ Զվի Զամիրն այցելել է հյուսիսային Իրաք և «խնդրել» Բարզանիին, որ վերջինս ավելացնի Բաղդադի կառավարության դեմ իրականացվող հարձակումների քանակը:

Քրդերի հետ համագործակցության ընթացքում Իսրայելը կարողացավ նաև շատ կարևոր տեղեկություններ հավաքել իրաքյան բանակի վերաբերյալ: 1967 թվականի «Վեցօրյա պատերազմը» դեռ չսկսված՝ իսրայելցիները կարողացան գողանալ իրաքյան բանակի Միգ 21 ինքնաթիռներից մեկը, որն իրականացրեց ազգությամբ քուրդ հրեա: Իրաքյան բանակի այդ դավաճան օդաչուի և իսրայելցիների միջև կապ հաստատած միջնորդները քրդեր էին: 1966թ. օգոստոսին Թել Ավիվում վայրէջք կատարած Միգ 21-ը մեծապես օգնեց իսրայելական հատուկ ծառայություններին, որոնք մինչ այդ տեղեկություններ չունեին խորհրդային արտադրության այդ ինքնաթիռի մասին: Ըստ որոշ կարծիքների՝ Միգ 21-ի տեխնիկական առանձնահատկությունների վերաբերյալ ձեռք բերած տեղեկությունները վճռորոշ նշանակություն ունեցան «Վեցօրյա պատերազմի» հենց առաջին օրը՝ Եգիպտոսի օդուժի դեմ Իսրայելի ծեռնարկած գրոհների ընթացքում:

«Վեցօրյա պատերազմի» ընթացքում Իրաքի ներքին անկայուն վիճակը թույլ չտվեց վերջինիս օգնել մյուս պատերազմող արաբական երկրներին: Արդյունքում, Իսրայելն ընդամենը մեկ շաբաթվա ընթացքում պարտության մատնեց Եգիպտոսին, Հորդանանին և Սիրիային:

Իսրայելում բավարարված էին քրդական գործոնի արդյունավետ օգտագործման կապակցությամբ: Իրադարձությունների նման զարգացման պայմաններում իսրայելա-քրդական հարաբերությունները, ինչպես նշել են մի շարք հեղինակներ, դարձան «Մերձավոր Արևելքի ամենավատ թաքցրած գաղտնիքը»[8]:

1960-ական թթ. վերջերին «Մոսսադն» իրանական «Սավակ» հետախուզական ծառայության հետ համատեղ մասնակցեց «Փարասթին» քրդական հետախուզական հատուկ ծառայության ստեղծմանը, որը ենթարկվում էր Մ. Բարզանիի գլխավորած Քրդական ժողովրդավարական կուսակցությանը[9]:

1969թ. մարտին քուրդ ապստամբներն Իրաքում գրոհներ ձեռնարկեցին Քիրքուքի նավթօջախների վրա և մեծ վնասներ պատճառեցին երկրի նավթարդյունաբերությանը: Համաձայն որոշ տեղեկատվական աղբյուրների՝

---

[8] Stu Yahya H. (Adnan Oktar), Israil'in Kurd Karti: Israil'in Ortadogu Stratejise ve Kurt Devleti Senaryoları

[9] ИТАР-ТАСС, 23.03.04

այդ գործողություններում իրենց զգալի դերակատարումն են ունեցել Իսրայելի ռազմական խորհրդականները: Վերջիններս կանոնավոր ռադիոկապի մեջ են եղել Իսրայելում իրենց ղեկավարության հետ՝ իրազեկելով գործողությունների ընթացքի վերաբերյալ:

Ստեղծված անբարենպաստ պայմաններում Իրաքի բաասիստական վարչախումբը հարկադրված էր զիջումների գնալ քրդական ապստամբության մեկ այլ հովանավորի՝ Իրանի նկատմամբ, որի հետ ուներ սահմանային խնդիրներ: 1975թ. մարտի 6-ին երկու երկրների միջև ստորագրվեց «Ալժիրյան համաձայնագիրը», որով Իրանը պարտավորվում էր դադարեցնել աջակցությունը քուրդ ապստամբներին, իսկ Իրաքը երկու երկրների սահմանը ճանաչում էր Շաթ էլ Արաբ գետի բնահունը: Դրանից հետո Իսրայելը նույնպես ստիպված էր առժամանակ հրաժարվել քրդերի հետ համագործակցության գաղափարից, քանի որ չէր կարող անտեսել իր ռազմավարական դաշնակից շահական Իրանի և իրաքյան իշխանությունների միջև ձեռք բերված պայմանավորվածությունը: Այսպիսով, 1975թ. ավարտվեց իսրայելա-քրդական համագործակցության ամենաակտիվ շրջանը[10]:

Իսրայելա-քրդական հարաբերությունների ժամանակավոր ճգնաժամն ավելի խորացավ 1978-1979թթ. Իրանի իսլամական հեղափոխությամբ, որը Մեծ Մերձավոր Արևելքում ուժային նոր դասավորության պատճառ հանդիսացավ:

1978-1979թթ. Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո Իրանը խզեց իր հարաբերություններն Իսրայելի հետ՝ ԱՄՆ-ի հետ մեկտեղ նրան ևս հայտարարելով Իրանի համար մեկ թշնամի: Փաստորեն, դրանով լուրջ հարված հասցվեց Իսրայելի «Ծայրամասային ռազմավարությանը». Իսրայելը զրկվեց իրաքյան քրդերին օգնելու իրանական կամուրջից և տարածաշրջանային կարևոր դաշնակցից: Ինչպես հետագայում նշեց Իսրայելի Ռազմական հետախուզական ծառայության (Աման) ղեկավար Ա. Յարիվը, «մեր կորուստներն Իրանում այնքան մեծ էին, որ նույնիսկ հույս չունեինք մոտ ապագայում ամբողջովին հաղթահարել այդ դժվարությունները, չնայած, որ անում էինք հնարավորինս դրանք նվազագույնի հասցնելու համար»[11]:

Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո լայնորեն շրջանառության մեջ մտավ իսլամական հեղափոխության արտահանման գաղափարը, որի շրջանակներում իսլամական գործիչներն սկսեցին ակտիվորեն օգտագործել քրդական և շիական համայնքներն Իրաքում՝ սեփական գաղափարախոսությունը տարածելու միտումով: Այդ իրադարձությունների ֆոնի ներքո 1980թ. սանձազերծվեց իրան-իրաքյան պատերազմը, որը տևեց ութ տարի: Դա առիթ հանդիսացավ ԱՄՆ-ի և Իսրայելի համար իրենց ուշադրությունը կենտրոնացնելու իրանական քրդերի ուղղությամբ՝ մի պահ կտրվելով իրաքյան իրակա-

---

[10] Sti'u Yahya H. (Adnan Oktar), Israil'in Kurd Karti: Israil'in Ortadogu Stratejise ve Kurt Devleti Senaryolari

[11] Иранская революция 1978-1979: причины и уроки, Москва, 1989, стр. 418

նությունից: Նրանք «Մոսսադի» և ԿՀՎ-ի միջոցով ակտիվացրին իրենց գործունեությունն Արևմտյան Իրանում, մասնավորապես՝ Իրանական Քրդստանում: Այդ գործունեության մասին են վկայում Թեհրանում նախկին ամերիկյան դեսպանատան՝ քրդական խնդրին առնչվող նյութերը[12]:

Սակայն այդ գործողությունները, որ նպատակ ունեին քրդերի միջոցով ապակայունացնելու ԻԻՀ-ի ներքին դրությունը, էական ազդեցություն չթողեցին նրա ներքաղաքական կյանքում. քրդերը, հանդիսանալով իրանական ժողովուրդ, կազմել են իրանական մշակութային քաղաքակրթության անբաժան միավորը՝ միաժամանակ պահպանելով իրենց հատուկ պատմությունն ու ավանդույթները: Եվ իրանական քրդերի սոցիալ-տնտեսական զարգացման ցածր կենսամակարդակի և ներփակ կենցաղավարման պայմաններում դժվար էր զարգացնել նրանց էթնո-մշակութային ինքնության գաղափարները:

1980-ական թթ. քրդական ինքնավարության համար պայքարում ակտիվացան Թուրքիայի քրդերը, որոնց առաջնորդ Աբդուլլա Օջալանը, 1978թ. ստեղծելով Քրդստանի աշխատավորական կուսակցությունը, իր համախոհների և քուրդ բնակչության մի ստվար զանգվածի աջակցությամբ, բացահայտ ահաբեկչական և պարտիզանական պատերազմ սկսեց թուրքական իշխանությունների դեմ:

Սակայն այստեղ չի կարելի խոսել Իսրայելի միանշանակ կողմնորոշվածության մասին թուրքական քրդերի հանդեպ, քանի որ դրա համար առկա էին ծանրակշիռ պատճառներ. նախևառաջ Թուրքիայի հետ տարածաշրջանային համագործակցությունն ի սկզբանե հանդիսացել է Իսրայելի արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մասը: Թուրքիան և Իսրայելը գտնվում էին Միացյալ նահանգների հետ միևնույն ռազմավարական ճամբարում, իսկ դա ենթադրում էր, որ ընդհանուր ռազմավարական համագործակցության տրամաբանությունը պետք է գերակայող լիներ մասնավոր շահերից բխող տրամաբանության նկատմամբ:

Բայց հարկ է նկատել, որ Իսրայելը միաժամանակ չէր հրաժարվում զարգացնել իր «Ծայրամասային ռազմավարության» քաղաքականությունը քրդերի նկատմամբ, որի շրջանակներից ամբողջովին չի բացառվում Թուրքիայի քրդերի գործոնը: Առաջ է գալիս երկակի ստանդարտների կիրառման սկզբունքը, որը որոշակի լարվածություն էր ստեղծում իսրայելա-թուրքական հարաբերություններում:

---

[12] Жигалина О., Документы американского посольства в Тегеране по курдскому, Специальный бюллетень Института Востоковедения Академии Наук СССР, № 6(270), Москва, 1990, стр. 120-125